Արավոտ (http://www.aravot.am)

17:16 | Մարտ 12 2018

Ճապոնիայի կառավարությունը Առափի գյուղի ջրերի ուղղությունը փոխել է (http://www.aravot.am/2018/03/12/942153/)

Առափի գյուղի բնակիչները ջրերի ձեռքը կրակն են ընկել: Շիրակի մարզի այս գյուղում ստորգետնյա ջրերն այնքան շատ են, որ ոռոգման նպատակով հարեւան գյուղերին էլ կբավարարի, սակայն խնդիրն այն է, որ ջրերը հոսում են մարդկանց տների տակով՝ ժամանակի ընթացքում խարխլելով հիմքերը: Առափիում շատ տների պատեր արդեն նկատելի ճաքեր ունեն, մի քանի գյուղացու տուն էլ պարզապես փլուզվելու վտանգի տակ է եղել եւ կառավարությունը նրանց փոխհատուցել է:

Առափի համայնքի ղեկավար Ալբերտ Այվազյանի խոսքով, որպեռւմ 40 լիտր ջուր է դուրս տալիս, օրեկան գյուղապետարանը 64 տոննա ջուր է հեռացնում ու այն խողովակներով ուղղում Ախուրյան գետը: Գյուղապետարանը ջրի քանակի վերաբերյալ հաշվարկներն ու պատկերացումները կազմել է այն բանից հետո, երբ մեկ տարի առաջ Ճապոնիայի կառավարության միջոցներով գյուղում ջրահեռացման համակարգ է կառուցվել: Այդ օրվանից ջուրը գյուղացիների տների տակից էականորեն նվազել է: Այս մասին հաստատել են նաեւ արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետները, որոնք այդ գյուղում պարբերաբար հետազոտություն են իրականացնում:
Համակարգը ներդնելու համար Առափին 114 հազար դոլար դրամաշնորհ է ստացել:

Ճապոնիայի կառավարությունից ստացած միջոցներով ջեռուցման համակարգ կանցկացվի Սպիտակ քաղաքի թիվ 8 դպրոցում: Այն կաշխատի արեւային էներգիայով: Այս դպրոցը երկրաշարժից հետո է կառուցվել: Տնօրենի խոսքով, էլեկտրամատակարարման համակարգը ֆիզիկապես մաշվել է եւ անկախ այն բանից, որ 4,5-ից 5 միլիոն դրամ են ծախսում միայն ջեռուցման նպատակով, միեւնույն է, երեխաները չեն տաքանում, միջանցքներում, զուգարաններում, սպորտդահլիճում ցուրտ է, դասասենյակներն էլ էլեկտրական սալիկներով են ջեռուցում, սակայն պահանջվող ջերմաստիճանը չի ապահովում: Տնօրենը հաշվարկել էր ու պարզել, որ նոր ջեռուցման համակարգը հնարավորություն կտա 1,5-ից երկու միլիոն դրամ տնտեսել, երեխաներն էլ չեն մրսի: Սպիտակի այս դպրոցն արդեն երեք տարի է ներառական է. այստեղ սովորում են հատուկ կարիքներով 28 երեխա:

(http://www.aravot.am/2018/03/12/942105/spitak-9/)

Երեկ Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էյջի Տագուչին այցելեց այս դպրոց՝ ջեռուցման ծրագրի պայմանագիրը կնքելու: Դեսպանը եղավ դասասենյակներում: Դպրոցն ունի նաեւ լողավազան, որը նույնպես ցրտի պատճառով չեն կարողանում աշխատեցնել:

(http://www.aravot.am/2018/03/12/942105/spitak-2-2/)

Սպիտակի մեկ այլ դպրոցի էլ դեսպանատունը գույք էր նվիրաբերել, դռներն ու պատուհանները փոխել, սպորտդահլիճի տանիքը բարեկարգել: Պարոն Էյջի Տագուչին այցելեց նաեւ Սպիտակի հուշարձանների պուրակ: Այստեղ Ճապոնիայի ցունամիի զոհերի հիշատակին խաչքար է կանգնեցվել:
ԱԻՆ փոխնախարար Դավիթ Կարապետյանը նշեց, որ ցունամիի հետեւանքները աշխարհում գնահատվել է տնտեսական ամենամեծ վնասը հասցված աղետը, որի տնտեսական վնասը կազմել է 300 միլիարդ դոլար: Պարոն Կարապետյանը նաեւ ասաց, որ Սպիտակի ավերիչ երկրաշարժի օրերին Ճապոնիան այն երկրներից էր, որը կանգնած էր Հայաստանի կողքին:

Մանրամասները՝ տեսանյութում

(http://www.aravot.am/2018/03/12/942105/spitak-1/)

(http://www.aravot.am/2018/03/12/942105/spitak-3-2/)

(http://www.aravot.am/2018/03/12/942105/spitak-5-2/)

(http://www.aravot.am/2018/03/12/942105/spitak-6-2/)Լուսինե ԲՈՒԴԱՂՅԱՆ

Առցանց Առավոտի լուրերին facebook-ով բաժանորդագրվելու համար սեղմեք

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:

Հեղինակ Լրագրող

Լուսինե ԲՈՒԴԱՂՅԱՆ

(http://www.aravot.am/author/lusineb/)